


ՎԱՆՏԵՐ ԴԻԼՈՅԱՆ



Երկարատև ու ծանր հիվանդությունից հետո կյանքից հեռացավ պատմական գիտությունների դոկտոր, Երևանի պետական համալսարանի պրոֆեսոր Վալտեր Արտաշեսի Դիլոյանը:

Վ. Դիլոյանը ծնվել է 1930 թ. Նոր-Բայազետ (այժմ՝ Գավառ) քաղաքում: 1947 թ. ավարտելով Էջմիածին քաղաքի թիվ 1 միջնակարգ դպրոցը՝ նույն տարում ընդունվել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, որը ավտովթարի պատճառով ավարտել է մեկ տարի ուշացումով՝ 1953 թ., սակայն գերազանցության դիպլոմով: 1953-54 թթ. ուսանել է Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանին առընթեր Հասարակական գիտությունների դասախոսների պատրաստման դասընթացում: 1955-60 թթ. ԽՍՀՄ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարության գործադրմամբ աշխատել է ԽՍՀՄ ԳԼԱՎԼԻՏ-ում: Այդ ընթացքում նա ուսանել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արտադրությունից չկտրված ասպիրանտուրայում՝ ակադեմի-

կոս Աշոտ Հովհաննիսյանի ղեկավարությամբ:

Տիրապետելով օտար լեզուների և ունենալով բազմակողմանի գիտելիքներ՝ Վ. Դիլոյանն սկսեց զբաղվել ոչ միայն հայոց միջնադարյան, այլև նոր ժամանակների պատմության մի շարք հիմնահարցերով: 1960 թ. Վ. Դիլոյանը, վերադառնալով Երևան, աշխատանքի է անցնում ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում, որտեղ մինչև 1965 թ. եղել է կրտսեր, իսկ 1965-71 թթ.՝ ավագ գիտաշխատող: Անցնելով գիտական աշխատանքի՝ հենց առաջին օրերից ծավալել է բուն և արգասաբեր գիտական գործունեություն. 1963 թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 11 տարի անց (1974 թ.)՝ դոկտորական ատենախոսություն: 1971-ից Վ. Դիլոյանը գիտական աշխատանքները զուգակցել է մանկավարժականի հետ և մինչև 1979 թ. ղեկավարել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի ընդհանուր պատմության ամբիոնը, որտեղ 1977 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: Այնուհետև տեղափոխվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետ՝ սկզբում որպես ընդհանուր պատմության (1979-93 թթ.), որից հետո 1993-1998 թթ. հին և միջին դարերի պատմության ամբիոնների վարիչ, իսկ 1998 թ. մինչև կյանքի վերջը՝ համաաշխարհային պատմության ամբիոնի պրոֆեսոր:

Նրա բեղուն գիտական գործունեության արդյունք են 150-ից ավելի գիտական աշխատություններ, այդ թվում՝ հոդվածներ ու մենագրություններ: Հայագիտության մեջ նա առաջինն էր, որ անդրադարձավ Լազարյանների գործունեությանը և 1966 թ. հրատարակեց «Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեությունից» արժեքավոր մենագրությունը, 23 տարի

անց (1989թ.) ընթերցողների սեղանին դրեց «Արևելյան Հայաստանը 19-րդ դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները» ծավալուն մենագրությունը, որտեղ նորովի են լուսաբանվում տվյալ ժամանակաշրջանի հայոց պատմությունը և հայ-ռուսական հարաբերություններին վերաբերող մի շարք կնճռոտ հարցեր: Միաժամանակ նա գործում մասնակցություն է ունեցել ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի հրատարակած «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի ստեղծմանը:

Առանձնապես մեծ է պրոֆ. Վ. Դիլոյանի վաստակը հայոց պատմության ամենատարբեր հարցերին նվիրված արխիվային փաստաթղթերի հայտնաբերման, գիտական մշակման ու հրատարակման քննազավառում: Այդ տեսակետից նշելի է հատկապես ակադեմիկոս Ծ. Աղայանի համահեղինակությամբ հրատարակված «Присоединение Восточной Армении к России» փաստաթղթերի ստվարածավալ երկհատորյակը (Եր., տ. I, 1972, տ. II, 1978):

Սակայն այս ամենով չեն սահմանափակվել նրա գիտամանկավարժական գործունեության շրջանակները: Նա եղել է Երևանի և Մոսկվայի տարբեր գիտական հաստատությունների գիտական խորհուրդների անդամ, ինչպես նաև մասնակցել հանրապետական, միութենական և միջազգային գիտաժողովների՝ հանդես գալով հայոց պատմության ամենատարբեր հարցերի նվիրված հետաքրքիր զեկուցումներով:

Վ. Դիլոյանը մեծ վաստակ ունի նաև եքիտասարդ կադրերի պատրաստման գործում: Նրա դեկավարությամբ բազմաթիվ ասպիրանտներ պաշտպանել են քեկնածուական ատենախոսություններ:

Երկար տարիներ հանդիսանալով «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի խմբագրական խորհրդի անդամ՝ Վ. Դիլոյանը մեծապես նպաստել է հրապարակումների որակի ապահովմանը:

Վ. Դիլոյանը կատարել է նաև գիտական ու գեղարվեստական թարգմանություններ ռուսերենից և անգլերենից: Հատկապես հիշատակության են արժանի Ն. Ադոնցի «Հայկական հարցը» ուսումնասիրության, ինչպես նաև Սվետոնիոսի «Տասներկու կեսարներ» և Սոմերսեթ Մոեմի «Ստրկություն մարդկային» պատմական ու գեղարվեստական երկերի թարգմանությունները:

Պրոֆ. Վ. Դիլոյանի գիտամանկավարժական բեղուն գործունեությունն աննկատ չի մնացել. 1974 թ. ՀԽՍՀ ԳԱ նախագահությունը Դիլոյանին պարգևատրել է գովեստազրով, իսկ հայ մշակույթին մատուցած ակնառու ծառայությունների համար ԵՊՀ հիմնադրման 80-ամյակի առթիվ (1999 թ.) ՀՀ նախագահի հրամանազրով նա արժանացել է Մովսես Խորենացու մեդալի:

Ազնիվ և բարի ընկերոջ, մեծ գիտնականի և քաղաքացու գործն ու հիշատակը միշտ վառ կմնան նրա բազմաթիվ ընկերների, բարեկամների, աշխատակիցների, ուսանողության և բոլոր նրան ճանաչողների սրտերում:

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՊՀ ՌԵԿՏՈՐԱՏ

ԵՊՀ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՅԱԿՈՒԼՏԵՏ
ՀԱՄԱԵՆԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԱՄԲԻՈՆ

«ՔԱՆՔԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ»
ՀԱՆՂԵՄԻ ԽՄԲԱՎՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒԴ